

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 02

«Գյոււմրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ

16.10.2015թ. գիտական խորհրդի նիստի

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան

Գիտական խորհրդի 59 (հիսունինը) անդամից ներկա էին 47-ը (քառասունյոթ):

### ՕՐԱԿԱՐԳ՝

1. Ամբիոնի վարիչի ընտրություն /Ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոն/:

Հաղ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան, մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ֆարմանյան

2. Գիտական կոչում շնորհելու հարց.

➤ Հոգեբանության ամբիոնի դասախոս, հ.գ.թ. Ա. Թադևոսյան (դոցենտի գիտական կոչման հավակնորդ):

Հաղ.՝ մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ֆարմանյան

3. Բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվություն: Բուհի զարգացման ՌԾ-ին համապատասխան 2015-2016 ուստարվա աշխատանքային պլանի հաստատում:

Ձեկ.՝ բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի ղեկան Ա. Գրիգորյան

4. Օտար լեզուների ֆակուլտետի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվություն: Բուհի զարգացման ՌԾ-ին համապատասխան 2015-2016 ուստարվա աշխատանքային պլանի հաստատում:

Ձեկ.՝ օտար լեզուների ֆակուլտետի ղեկան Թ. Մելիքյան

5. Ընթացիկ հարցեր:

**5.1 Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում ուսանողների հետ դաստիարակչական աշխատանքի կազմակերպման կանոնակարգի ելակետային դրույթների ներկայացում:**

**Զեկ.**՝ Մանկ. գիտ. դոկ.,  
պրոֆեսոր Ա. Մանուկյան

Ռեկտոր Վ. Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

**ՔՎԵԱՐԿԱԿԱՅԻՆ** – 40 անդամ. կողմ՝ 40, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**1.ԼՍԵՑԻՆ.- Ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչի ընտրություն:** Ինստիտուտի մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ֆարմանյանի հաղորդմամբ՝ ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչի թափուր տեղի համար դիմել է նույն ամբիոնի վարիչի պաշտոնակատար Հենրիկ Ռուբենի Դրմեյանը:

Ա. Ֆարմանյանը ներկայացրեց համապատասխան ձևայնացված կարգավիճակը զբաղեցնելու համար դիմած թեկնածուի ինքնակենսագրությունը, վերջին 5 տարիների ընթացքում նրա հրատարակած գիտական աշխատանքների թիվը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-** Ռեկտոր Վ. Գրիգորյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը, ֆիզիկամաթեմատիկական և տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Մ. Մարգարյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Կազմակերպել ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչի ընտրության փակ գաղտնի քվեարկություն:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** – 40 անդամ. կողմ՝ 40, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահը փակ գաղտնի քվեարկության կարգը գիտական խորհրդի անդամներին ներկայացնելուց հետո առաջարկեց գիտական խորհրդի անդամներից ընտրել առնվազն 3 հոգուց կազմված հաշվիչ հանձնաժողով՝ փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և արդյունքներն ամփոփելու նպատակով:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** – 40 անդամ. կողմ՝ 40, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Փակ գաղտնի քվեարկության անցկացումից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա. Մաթևոսյանը հրապարակեց քվեարկության արդյունքները.

N	Թեկնածուի ազգանուն, անուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Դրմեյան Հենրիկ	38	2	0

**ՈՐՈՇԵՑԻՆ.**- 1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի կողմից ներկայացված փակ գաղտնի քվեարկության արդյունքները:

2. Տեխ. գիտ. դոկ., պրոֆեսոր Հենրիկ Ռուբենի Դրմեյանին համարել ընտրված 5 տարի ժամկետով ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչի պաշտոնում:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** – 40 անդամ. կողմ՝ 40, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**2.ԼՍԵՑԻՆ.**- **Գիտական կոչում շնորհելու հարցը:** Մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ֆարմանյանը ներկայացրեց դոցենտի գիտական կոչում հայցող հավակնորդին:

**Դոցենտի գիտական կոչում հայցող հավակնորդ՝**

№	Անուն, հայրանուն, ազգանուն	Ամբիոն, ձևայնացված կարգավիճակ	Գիտության բնագավառ, մասնագիտություն, թվանիշ
1.	Արմինե Երվանդի Թադևոսյան	Հոգեբանության ամբիոնի ախստենտ	ԺԹ.00.05 – «Զարգացման և կրթության հոգեբանություն (մանկավարժական, տարիքային, հատուկ)»

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**- Ռեկտոր, մ.գ.դ, պրոֆեսոր Վ. Գրիգորյանը, հոգեբանության ամբիոնի վարիչ, հ.գ.թ., դոցենտ Կ. Սահակյանը:

Գիտական կոչում շնորհելու մասին որոշում կայացնելու համար անցկացվեց փակ գաղտնի քվեարկություն, որի կազմակերպման համար ընտրվեց 3 հոգուց բաղկացած հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Ազատ Մաթևոսյան, Արթուր Մկրտչյան և Բաբկեն Սերոբյան:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահը ներկայացրեց փակ գաղտնի քվեարկության հետևյալ արդյունքները.

№	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Արմինե Երվանդի Թադևոսյան	39	1	0

**ՈՐՈՇԵՑԻՆ.**- Հաշվի առնելով, որ Արմինե Երվանդի Թադևոսյանի ներկայացրած գործը լիովին համապատասխանում է ՀՀ կառավարության 09.07.2001թ. հ. 615 որոշմամբ հաստատված ՀՀ-ում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի՝ դոցենտի գիտական կոչման համար սահմանված պահանջներին (5բ), ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի նիստում անցկացված փակ գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա (քվեարկել են 40-ը. կողմ՝ 39, դեմ՝ 1, անվավեր՝ 0) Արմինե Երվանդի Թադևոսյանին շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ԺԹ.00.05 – «Զարգացման և

կրթության հոգեբանություն (մանկավարժական, տարիքային, հատուկ)» մասնագիտությամբ և միջնորդել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու այդ որոշումը և ամրագրելու համապատասխան դիպլոմով:

**3.ԼՍԵՑԻՆ.- Բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի դեկան Ա. Գրիգորյանի գեկուցումը բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի 2014-2015 ուստարվա գործունեության, ինչպես նաև բուհի զարգացման ՌԾ-ին համապատասխան 2015-2016 ուստարվա աշխատանքային պլանի մասին:**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-** Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, կ.գ.դ., պրոֆեսոր Ս. Ալեքսանյանը, Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, ֆ.գ.թ., դոցենտ Ա. Ֆարմանյանը, կեսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի ասիստենտ, կ.գ.թ., դոցենտ Կ. Գրիգորյանը:

Ս. Ալեքսանյանը կարևորեց ֆակուլտետում տիրող առողջ բարոյաևհոգեբանական մթնոլորտը և ամբիոնների համախմբված աշխատանքը:

Ա. Ֆարմանյանը շնորհակալություն հայտնեց Ա. Գրիգորյանին՝ կատարած աշխատանքի համար: Հատկապես նա բարձր գնահատեց բուհում ծավալված հասարակական գործունեությունը:

Ա. Ֆարմանյանին հետաքրքրում էր ֆակուլտետում դասախոսների կարիքների գնահատման իրագործումը:

Ա. Գրիգորյանը նշեց, որ ամբիոնները վարիչները կարևորում են աշխատակիցների կարիքների գնահատումը, սակայն դեռևս հետազոտություն անցկացված չէ:

Նա հավելեց, որ այժմ բուհում կա մասնակցային կառավարման զարգացման անհրաժեշտություն: Նրա համոզմամբ՝ ֆակուլտետների ամբիոններն ունեն ներուժ՝

կարևոր որոշումներում սեփական առաջարկությունները ներկայացնելու համար:

Կ. Գրիգորյանը կարևորեց ֆակուլտետում տիրող կարգուկանոնը, որը ֆակուլտետի դեկանի, ամբիոնների աշխատակիցների և ֆակուլտետի որակի պատասխանատուի արդյունավետ աշխատանքի արդյունքն է: Ինչ վերաբերում է ուսանողների նվազող քանակին, ապա այդ միտումը պայմանավորված է Շիրակի մարզի բնակիչների արտահոսքով:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** 1.Բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի դեկանի 2014-2015 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար, և որոշման նախագիծն ընդունել հիմք՝ արված առաջարկություններով հանդերձ:

2.Հաստատել՝ բուհի զարգացման ՌԾ-ին համապատասխան բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի 2015-2016 ուստարվա աշխատանքային պլանը:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** – 40 անդամ. կողմ՝ 40, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**4.ԼՍԵՑԻՆ.-** Օտար լեզուների ֆակուլտետի դեկան Թ. Մելիքյանի զեկուցումը օտար լեզուների ֆակուլտետի 2014-2015 ուստարվա գործունեության, ինչպես նաև բուհի զարգացման ՌԾ-ին համապատասխան 2015-2016 ուստարվա աշխատանքային պլանի մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-** Ռեկտոր, մ.գ.դ, պրոֆեսոր Վ. Գրիգորյանը, Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, ֆ.գ.թ., դոցենտ Ա. Ֆարմանյանը, ռուսաց լեզվի և նրա դասավանման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ, պրոֆեսոր Գ. Ամբարդարյանը:

Ա. Ֆարմանյանը նախ արտահայտեց իր մտահոգությունն այն հարցի շուրջ, որ օտար լեզուների ֆակուլտետի դիմորդները հիմնականում միասնական քննություններից ստանում են բարձր

գնահատաններ: Սակայն ուսումնառության ընթացքում ուսանողների կեսից ավելին չի կարողանում ապահովել բարձր առաջադիմություն: Ըստ այդմ, նրան հետաքրքրում էին պատճառները:

Թ. Մելիքյանը համաձայնեց, որ օտար լեզուների ֆակուլտետում սովորում են բանիմաց ուսանողներ՝ միաժամանակ ընդունելով, որ գրեթե չկան առաջադիմողներ: Նրա հիմնավորմամբ՝ պատճառն այն է, որ անգլերեն լեզվի մասնագետները չափազանց խիստ են մոտենում ուսանողների գիտելիքներին և չեն շռայլում գնահատականներ:

Օտար լեզուների ֆակուլտետի անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության բակալավրիատի առկա չորրորդ կուրսի ուսանող Ստելլա Հարությունյանի խոսքերով՝ ուսանողները լիովին բավարարված են ստացած գիտելիքների պաշարով և իրենց առանձնապես չի մտահոգում ստացած գնահատականը: Նա ընդունեց, որ դասախոսները չափազանց խիստ են, բայց օբյեկտիվ:

Ա. Ֆարմանյանը շնորհակալություն հայտնեց Թ. Մելիքյանին՝ բովանդակալից զեկույցի համար և հավելեց, որ ինստիտուտում որակի ապահովման գործընթացը դեռ նոր է բուռն զարգացում ունենալու: Առայժմ կատարված են նախնական քայլերը: Ապա հավելեց, թե որքան էլ ծանրաբեռնված լինի դասախոսը, նա պետք է անընդհատ բարձրացնի իր մասնագիտական գիտելիքները և կարողանա դրանք պատշաճ մակարդակով փոխանցել ուսանողներին: Հաշվի առնելով ֆակուլտետի 2014-2015 ուստարվա կանոնակարգված գործունեությունը՝ առաջարկեց օտար լեզուների ֆակուլտետի դեկանի 2014-2015 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար:

Ռուսաց լեզվի և նրա դասավանման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ, պրոֆեսոր Գ. Ամբարդարյանը նշեց, որ ամբիոնները չափազանց պատասխանատու են մոտենում ցանկացած հանձնարարության և այսուհետ ևս կաշխատեն՝ հանուն կազմակերպության նպատակների:

Ռեկտորը շեշտեց, որ վերջին երկու տարվա ընթացքում ինստիտուտի աշխատանքներն ուղղված են եղել ինստիտուցիոնալ հավատարմագրմանը նախապատրաստելուն: Բուհի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը խթանել է որակի ապահովման ուղղությամբ համապատասխան գործողությունների իրականացմանը: Նա ընդունեց, որ աշխատաշուկայում մրցունակ շրջանավարտի ապահովման ուղղությամբ անելիքները շատ են: Ավելին, նկատեց, որ աշխատանքի ուղիքը չի կարող թուլանալ, որովհետև պահանջներն օրեցօր բարձրանում են: Համապատասխանաբար, բուհը պետք է համալրված լինի որակյալ մասնագետներով: Վ. Գրիգորյանը հորդորեց ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Գ. Ամբարդարյանին՝ շահադրդելու աշխատակիցներին գիտական գործունեության ծավալմանը, քանի որ ամբիոնն ունի լուրջ մասնագիտական ներուժ: Եվ նա ևս մեկ անգամ բարձրաձայնեց վերջին տարիներին ֆրանսերեն ու գերմաներեն լեզուների գծով դիմորդների քանակի նվազման խնդիրը:

Ռեկտորն իր խոսքի ավարտին առաջարկեց ֆակուլտետի դեկանի գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում գնահատել բավարար՝ հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** 1.Օտար լեզուների ֆակուլտետի դեկանի 2014-2015 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար, և



որոշման նախագիծն ընդունել հիմք՝ արված առաջարկություններով հանդերձ:

2. Հաստատել բուհի զարգացման ՌԾ-ին համապատասխան օտար լեզուների ֆակուլտետի 2015-2016 ուստարվա աշխատանքային պլանը:

**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** – 40 անդամ. կողմ՝ 40, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**5. ԼՍԵՑԻՆ.-** Ընթացիկ հարց:

**5.1 ԼՍԵՑԻՆ.-** Մանկավարժության ամբիոնի աշխատակից, մանկ. գիտ. դոկ., պրոֆեսոր Ա. Մանուկյանի զեկուցումը Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում ուսանողների հետ դաստիարակչական աշխատանքի կազմակերպման կանոնակարգի ելակետային դրույթների վերաբերյալ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-** Մանկ. գիտ. դոկ., պրոֆեսոր Ռ. Գրիգորյանը,

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում ուսանողների հետ դաստիարակչական աշխատանքի կազմակերպման կանոնակարգի նախնական տարբերակի բարելավման նպատակով՝ քննարկել այն ԳՊՄԻ-ի կառուցվածքային ստորաբաժանումներում և, ապա, ներկայացնել գիտական խորհրդի հաստատմանը:

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

**Թ. ԽԱՉԱՏՏՅԱՆ**